

«Եվրասիական
տնտեսական միության
մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքների մասին

1. Սույն արձանագրությամբ՝ ըստ Եվրասիական տնտեսական միության պայմանագրի 81 և 82-րդ հոդվածների (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանվում են էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիության ապահովման միասնական սկզբունքներն ու կանոնները:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«Էլեկտրաէներգիայի (հզորության) ներքին պահանջ» համապատասխան անդամ պետությունների տարածքում շահագործման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի (հզորության) ծավալները.

«Բնական մենաշնորհների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիություն»՝ անդամ պետություններից մեկի ներքին շուկայի սուբյեկտի կողմից՝ այլ անդամ պետության տարածքում էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու հնարավորություն.

«Էլեկտրաէներգիայի (հզորության) փոխարինում»՝ դեպի էներգահամակարգ և էներգահամակարգից դուրս էլեկտրաէներգիայի (հզորության) հավասար ծավալների՝ փոխկապակցված և միաժամանակյա մատակարարում մատակարարման տարբեր կետերի միջև, որոնք տեղակայված են անդամ պետության սահմանի (սահմանների) վրա:

«Էլեկտրաէներգիայի (հզորության) միջանական հաղորդում»՝ անդամ պետությունների իրավասու կազմակերպությունների կողմից էլեկտրաէներգիայի (հզորության) փոխադրման և (կամ) փոխարինման ծառայությունների մատուցում:

«Ըստ անդամ պետության օրենսդրության՝ համապատասխան հարաբերությունները ձևակերպվում են փոխադրման (տարանցման) ծառայությունների մատուցման պայմանագրերով կամ այլ իրավաքաղաքացիական պայմանագրերով, այդ թվում նաև էլեկտրաէներգիայի (հզորության)առք ու վաճառքի պայմանագրերով.

«անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկա»՝ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական ներքին շուկայի սուբյեկտների միջև հարաբերությունների համակարգ, որը կապված է էլեկտրաէներգիայի (հզորության)՝ ընդհանուր կանոնների և համապատասխան պայմանագրերի հիմքով մատուցվող առք ու վաճառքի և հարակից ծառայությունների հետ.

«Էլեկտրաէներգիայի (հզորության) փոխադրում»՝ անդամ պետություններից մեկի տարածքում արտադրված էլեկտրաէներգիայի (հզորության) փոխհոսքերի ապահովում մեկ այլ անդամ պետության ցանցերով այդ պետության մատակարարման կետերի միջև, որոնք տեղակայված են նրա սահմանի (սահմանների) վրա.

«Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի սուբյեկտ»՝ անդամ պետության ազգային օրենսդրության համաձայն, էլեկտրաէներգիայի (հզորության) շուկայի սուբյեկտ հանդիսացող անձինք, որոնք գործունեություն են ծավալում էլեկտրաէներգետիկայի ոլորտում, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրություն, էլեկտրաէներգիայի (հզորության) ձեռքբերում և վաճառք, էլեկտրաէներգիայի բաշխում, սպառողների էներգամատակարարում, էլեկտրաէներգետիկայի ոլորտում հաղորդման, օպերատիվ-դիսպեչերական կառավարման մասով ծառայությունների մատուցում, էլեկտրաէներգիայի (հզորության) իրացում, էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի կազմակերպում.

«Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայություններ»՝ էլեկտրական ցանցով էլեկտրաէներգիայի հաղորդման, օպերատիվ-դիսպեչերական կառավարման էլեկտրաէներգետիկայի բնագավառի և այլ ծառայություններ, որոնք, անդամ պետությունների ազգային օրենսդրության համաձայն, վերաբերում են բնական մենաշնորհների ոլորտին.

3. Էլեկտրաէներգետիկայի ոլորտում անդամ պետությունների փոխհամագործակցությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

անդամ պետությունների էլեկտրաէներգետիկ համակարգերի գուգահեռ աշխատանքի տեխնիկական և տնտեսական առավելությունների օգտագործում.

գուգահեռ աշխատանքների իրականացման ընթացքում տնտեսական վնաս չհասցնելու սկզբունք.

մեխանիզմների օգտագործում, որոնք հիմնված են շուկայական հարաբերությունների և բարեխսիղճ մրցակցության վրա, որպես էլեկտրաէներգիայի (հզորության) պահանջարկը բավարարելու կայուն համակարգերի ձևավորման հիմնական գործիքներից մեկի օգտագործում:

անդամ պետությունների՝ զուգահեռ աշխատող էներգահամակարգերի հիմքով էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի փուլային ձևավորում՝ հաշվի առնելով անդամ պետությունների էլեկտրաէներգիայի (հզորության) շուկայի գործող մոդելների առանձնահատկությունները.

Էներգետիկայի ոլորտում անդամ պետությունների օրենսդրությունների փուլային ներդաշնակեցում.

տեխնիկական նորմերի և կանոնների ներդաշնակեցում:

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների գործողությունների կարգավորումն իրականացվում է Պայմանագրի XIX բաժնում սահմանված միասնական սկզբունքների կանոնների և մեթոդների հիման վրա:

4. Անդամ պետությունները նպաստում են իրենց պետությունների էլեկտրաէներգետիկայի զարգացման ծրագրերի համակարգմանը՝ նպատակ ունենալով ապահովելու էլեկտրաէներգետիկայի ոլորտում երկարաժամկետ արդյունավետ համագործակցություն:

5. Միության ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի կազմավորումն իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

իրավահավասարության, փոխադարձ շահի և անդամ պետություններից յուրաքանչյուրին տնտեսական վնաս չհասցնելու վրա հիմնված համագործակցություն.

Էլեկտրաէներգիայի արտադրողների և սպառողների, ինչպես նաև անդամ պետությունների ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի այլ սուբյեկտների տնտեսական շահերի հավասարակշռության պահպանում.

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում անդամ պետությունների օրենսդրությունների փուլային ներդաշնակեցում, ինչպես նաև անդամ պետությունների ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի սուբյեկտների կողմից տեղեկատվության բացահայտման մասով.

մեխանիզմների առաջնահերթ օգտագործում, հիմնված շուկայական հարաբերությունների և բարեխսիղճ մրցակցության վրա, մրցակցային գործունեության տեսակներում էլեկտրաէներգիայի (հզորության) պահանջարկի բավարարման կայուն համակարգի ձևավորման համար.

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայություններն առանց խոչընդոտների հասանելիության ապահովում, առկա տեխնիկական հնարավորությունների սահմանում, նշված ծառայությունների առաջնահերթ օգտագործման պայմանով, անդամ պետությունների ներքին կարիքների ապահովման համար՝ Էլեկտրաէներգիայի (հզորության) միջային փոխանցումն ապահովելու դեպքում.

Էլեկտրաէներգիայի ոլորտում ազգային ուղղաձիգ ինտեգրված կազմակերպությունների աստիճանական փոխակերպություն՝ գործունեության մրցակցային և մենաշնորհային տեսակների առանձնացման նպատակով.

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում անդամ պետությունների միջային փոխական հարաբերությունների զարգացում՝ անդամ պետությունների ընդհանուր Էլեկտրաէներգետիկ շուկայի համաձայնեցված մոդելին համապատասխան.

անդամ պետությունների ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի փուլային ձևավորում՝ անդամ պետությունների՝ զուգահեռաբար աշխատող էլեկտրաէներգետիկ համակարգերի հիման վրա՝ հաշվի առնելով անդամ պետությունների էլեկտրաէներգետիկ շուկաների առկա մոդելների առանձնահատկությունները.

անդամ պետությունների էլեկտրաէներգետիկ համակարգերի զուգահեռ աշխատանքի տեխնիկական և տնտեսական առավելությունների օգտագործումը՝ զուգահեռ աշխատանքի փոխհամաձայնեցված պայմանների պահպանմամբ.

շուկայի ինտեգրման համապատասխան փուլում անդամ պետությունների էլեկտրաէներգետիկ շուկաների էլեկտրաէներգիայի հասանելիությունը արտադրողների և սպառողների համար՝ հաշվի առնելով ազգային տնտեսությունների շահերը.

անդամ պետությունների սուբյեկտների միջև էլեկտրաէներգիայի առևտրի իրականացում՝ հաշվի առնելով անդամ պետությունների էներգետիկ ապահովությունը:

6. Առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում անդամ պետություններն ապահովում են էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայություններից առանց խոչընդոտների օգտվելու հասանելիություն՝ պայմանով, որ նշված ծառայությունները որպես առաջնային օգտագործվեն անդամ պետությունների ներքին պահանջների ապահովման համար, հետևյալ սկզբունքների հիմքով՝

Էլեկտրաէներգիայի (հզորության) ներքին շուկայի սուբյեկտներին ներկայացվող պահանջների հավասարություն, որոնք սահմանված են այն անդամ պետության ազգային օրենսդրությամբ, որի տարածքում մատուցվում են ծառայությունները.

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիություն տրամադրելիս՝ ազգային օրենսդրության հաշվառում, պայմանով, որ նշված ծառայությունները որպես առաջնային պետք է օգտագործվեն անդամ պետությունների ներքին պահանջների ապահովման համար,

Էլեկտրաէներգետիկայի այն օբյեկտների տեխնիկական պատշաճ վիճակի ապահովում, որոնք ազդում են անդամ պետությունների էներգահամակարգերի գուգահեռ աշխատանքների ռեժիմների վրա՝ բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների ժամանակ.

անդամ պետությունների Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի սուբյեկտների միջև ծագող հարաբերությունների ձևակերպում պայմանագրային հիմքով.

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում անդամ պետությունների բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների փոխհատուցվելիություն:

7. Էլեկտրաէներգիայի (հզորության) միջային փոխանցման ապահովումն իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1) սահմանակից անդամ պետությունների Էլեկտրահամակարգի միջոցով Էլեկտրաէներգիայի (հզորության) միջային փոխանցման միջոցով ապահովում է անդամ պետությունների կողմից՝ առկա տեխնիկական հնարավորությունների սահմանում, պայմանով, որ որպես առաջնահերթություն ապահովվեն անդամ պետությունների ներքին պահանջները:

2) Էլեկտրաէներգիայի (հզորության) միջային փոխանցման տեխնիկական հնարավորությունները սահմանվում են՝ հաշվի առնելով հետևյալ առաջնահերթությունները՝

այն անդամ պետության ներքին Էլեկտրաէներգետիկական կարիքների ապահովում, որի Էլեկտրաէներգետիկ համակարգի միջոցով ծրագրվում է իրականացնել միջային փոխանցման հաղորդում.

Էլեկտրաէներգիայի (հզորության) միջային փոխանցման հաղորդման ապահովում անդամ պետության էներգահամակարգի մի մասից դեպի մյուս մասը՝ որոշակի սահմանակից անդամ պետության էներգահամակարգի միջոցով.

Էլեկտրաէներգիայի (հզորության) միջային փոխանցման ապահովում անդամ պետության Էլեկտրաէներգետիկ համակարգի միջոցով՝ մի անդամ պետության Էլեկտրաէներգետիկ համակարգից մի այլ անդամ պետության Էլեկտրաէներգետիկ համակարգ.

Էլեկտրաէներգիայի (հզորության) միջային փոխանցման հաղորդման ապահովում անդամ պետության էներգահամակարգի միջոցով՝ նպատակ ունենալով կատարելու

անդամ չհանդիսացող պետությունների Էլեկտրաէներգետիկայի ոլորտի սուբյեկտների նկատմամբ պարտավորությունները:

3) Էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական փոխանցման ժամանակ անդամ պետությունների իրավասու կազմակերպություններն առաջնորդվում են Էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդման արժեքի փոխհատուցման սկզբունքով՝ ենելով անդամ պետության գործող օրենսդրության առանձնահատկություններից:

4) Էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդումը անդամ չհանդիսացող այլ պետությունների Էլեկտրաէներգետիկայի ոլորտի սուբյեկտների նկատմամբ պարտավորությունները կատարելու նպատակով կարգավորվում է երկողմանիորեն՝ հաշվի առնելով համապատասխան անդամ պետության ազգային օրենսդրությունը:

8. Էներգահամակարգերով Էլեկտրաէներգիայի (հզորության) անխափան միջաբետական հաղորդում ապահովելու նպատակով՝ անդամ պետություններն իրականացնում են համաձայնեցված նախապատրաստական միջոցառումների համալիր, այն Է՝

Նախքան Էլեկտրաէներգիայի (հզորության) հաղորդման օրացուցային տարվա սկզբը՝ անդամ պետությունների իրավասու կազմակերպությունները հայտարարում են Էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդման համար նախատեսված պլանային ծավալների մասին՝ Էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության և սպառման կանխատեսվող հաշվեկշիռների մեջ հաշվի առնելու համար, այդ թվում՝ բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման ժամանակ նման մատակարարումները հաշվի առնելու համար.

Էլեկտրաէներգիայի (հզորության) հաղորդման պլանային արժեքի հաշվարկման հիման վրա, անդամ պետությունների կողմից իրավասություն ստացած կազմակերպությունները կնքում են պայմանագրեր՝ ձեռք բերված պայմանավորվածություններն իրականացնելու նպատակով:

Անդամ պետությունների Էներգահամակարգերով Էլեկտրաէներգիայի (հզորության) անխափան միջաբետական հաղորդում ապահովելու նպատակով, անդամ պետությունների իրավասու մարմինները կիրառում են դրանց համար սահմանված միասնական Մեթոդաբանություն, որը ներառում է Էլեկտրաէներգիայի (հզորության) հաղորդման տեխնիկական պայմանների և ծավալների սահմանման կարգը, ինչպես նաև Էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդման հետ կապված ծառայությունների գնագոյացման առումով համաձայնեցված մոտեցումները, որոնք նշված են սույն Արձանագրության հավելվածում:

Անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող կազմակերպությունները ապահովում են Էլեկտրաէներգիայի (հզորության) միջայտական հաղորդում՝ իրենց պետության տարածքով՝ վերոնշյալ Մեթոդաբանության համաձայն:

9. Էլեկտրաէներգիայի (հզորության) միջայտական հաղորդման իրականացումը և Էլեկտրացանցային տնտեսության օբյեկտների շահագործման ապահովումը, որոնք անհրաժեշտ են Էլեկտրաէներգիայի (հզորության) միջայտական հաղորդում ապահովելու համար, կատարվում է Էլեկտրաէներգիայի (հզորության) միջայտական հաղորդման ապահովման հետ կապված ծառայություններ մատուցող՝ անդամ պետությունների նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համաձայն:

10. Էլեկտրաէներգիայի (հզորության) միջայտական հաղորդման ապահովումը մերժելու դեպքում, անդամ պետությունների իրավասու կազմակերպություններն ապահովում են մերժումը հիմնավորող նյութերի տրամադրումը:

11. Էլեկտրաէներգիայի ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների մասով գնագույնությունը (սակագնի գոյացումը) իրականացվում է անդամ պետությունների ազգային օրենսդրության համաձայն:

Անդամ պետությունների Էլեկտրաէներգետիկայի ընդհանուր շուկայում Էլեկտրաէներգետիկայի ոլորտի բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների սակագները չպետք է գերազանցեն համարժեք ներքին սակագները, որոնք գործում են Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի սուբյեկտների համար:

12. Էլեկտրաէներգիայի (հզորության) միջայտական հաղորդման հետ կապված հարաբերությունների կարգավորումներն իրականացվում են՝ հաշվի առնելով այլ միջազգային համաձայնագրեր ու պայմանագրեր:

Հավելված

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում
բնական մենաշնորհների կողմից
մատուցվող ծառայությունների
հասանելիության արձանագրության
մասին ներառյալ գնագոյացման և
սակագնային քաղաքականության
հիմունքները

ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Էլեկտրաէներգիայի (հզորության) միջայտական հաղորդման տարեկան կանխատեսվող ծավալների ձևավորման և դրանց համար հայտեր ներկայացնելու կարգի հիմնական դրույթները, որոնք ենթակա են**

Էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության և կիրառման կանխատեսվող հաշվեկշռի, այդ թվում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման ժամանակ հաշվի առնվող հաշվեկշռի մեջ ներառման

1.1. Բելառուսի Հանրապետության տարածքում:

1.1.1. Բելառուսի Հանրապետության ազգային էլեկտրացանցերով էլեկտրաէներգիայի (հզորության) միջայտական հաղորդման (այսուհետ՝ ՄՊՀ) տարեկան կանխատեսվող ծավալները սահմանվում են միջայտական հաղորդում իրականացնելու համար իրավասու կազմակերպության կողմից՝ ներկայացվող հայտի հիման վրա:

1.1.2. Առաջիկա օրացուցային տարվա համար հայտը ներկայացվում է ոչ ուշ, քան նախորդ տարվա ապրիլի 1-ը: Հայտի մեջ նշվում է էլեկտրաէներգիայի միջայտական հաղորդման և առավելագույն հզորության տարեկան ծավալը՝ ըստ ամիսների:

1.1.3. Հայտն ուսումնասիրելիս՝ Բելառուսի Հանրապետության իրավասու կազմակերպությունն առաջնորդվում է առկա տեխնիկական հնարավորությունների չափով, որը սահմանվում է սույն Մեթոդաբանության համաձայն:

Եթե հայտով ներկայացվող էլեկտրաէներգիայի միջայտական հաղորդման չափը գերազանցում է ընդհանուր տեխնիկական հնարավորությունների չափը

տարեկան կտրվածքով կամ տարվա որևէ ամսի համար, ապա Բելառուսի Հանրապետության իրավասու կազմակերպությունը հայտ ներկայացնող կազմակերպությանն ուղարկում է հիմնավորված մերժում:

1.1.4. Էլեկտրաէներգիայի միջաբետական հաղորդման պահանջվող ծավալները, որոնց շուրջ համաձայնություն է ձեռք բերվել Բելառուսի Հանրապետության իրավասու կազմակերպության հետ, ձևակերպվում են որպես էլեկտրաէներգիայի հաղորդման պայմանագրի հավելված և հաշվի են առնվում էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայությունների համար վճարների սակագները հաշվարկելու ժամանակ:

1.1.5. Միջաբետական հաղորդման համար նախատեսվող էլեկտրաէներգիայի ծավալները կարող են ճշտվել անդամ պետությունների իրավասու կազմակերպությունների համաձայնությամբ՝ մինչև ծրագրված միջաբետական հաղորդմանը նախորդող տարվա նոյեմբերի 1-ը:

1.2. Ղազախստանի Հանրապետության տարածքում:

1.2.1. Ղազախստանի Հանրապետության ազգային էլեկտրացանցերով էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդման տարեկան կանխատեսվող ծավալները սահմանվում են միջաբետական հաղորդում իրականացնելու համար իրավասու կազմակերպության կողմից՝ Ղազախստանի Հանրապետության համակարգի օպերատորին ներկայացվող հայտի հիման վրա:

1.2.2. Առաջիկա օրացուցային տարվա համար հայտը ներկայացվում է ոչ ուշ քան նախորդ տարվա ապրիլի 1-ը: Հայտի մեջ նշվում է էլեկտրաէներգիայի միջաբետական հաղորդման տարեկան ծավալը՝ ըստ ամիսների և Ղազախստանի Հանրապետության սահմանի վրա էլեկտրաէներգիայի ընդունման և հանձնման կետերի նշումով:

1.2.3. Հայտն ուսումնասիրելիս Ղազախստանի Հանրապետության համակարգային օպերատորը առաջնորդվում է առկա տեխնիկական հնարավորությունների չափով, որը սահմանվում է սույն Մեթոդաբանության համաձայն: Եթե հայտով ներկայացվող՝ էլեկտրաէներգիայի միջաբետական հաղորդման չափը գերազանցում է ընդհանուր տեխնիկական հնարավորությունների չափը տարեկան կտրվածքով կամ տարվա որևէ ամսի համար, ապա Ղազախստանի Հանրապետության համակարգի օպերատորը հայտ ներկայացնող կազմակերպությանն ուղարկում է հիմնավորված մերժում:

1.2.4. Էլեկտրաէներգիայի միջաբետական հաղորդման պահանջվող ծավալները, որոնց շուրջ համաձայնություն է ձեռք բերվել Ղազախստանի Հանրապետության համակարգի օպերատորի հետ, ձևակերպվում են որպես էլեկտրաէներգիայի հաղորդման պայմանագրի հավելված և հաշվի են առնվում էլեկտրաէներգիայի

հաղորդման ծառայությունների համար վճարների սակագները հաշվարկելու ժամանակ:

1.2.5. Ղազախստանի Միասնական Հներգահամակարգի (այսուհետ՝ Ղազախստանի ՄԷՀ) համաձայն էլեկտրաէներգիայի և հզորության կանխատեսվող հաշվեկշիռի ծևակերպումից հետո, մինչև պլանային տարվան նախորդող տարվա հոկտեմբերի 15-ը, երկողմ միջայտական պայմանագրերով սահմանվում և մեծածախ շուկայի սուբյեկտների հետ համաձայնեցվում են էլեկտրաէներգիայի մատակարարումների ծավալները:

1.2.6. Միջայտական հաղորդման համար նախատեսվող էլեկտրաէներգիայի ծավալները կարող են փոփոխվել էլեկտրաէներգիայի միջայտական հաղորդման կազմակերպման և իրականացման համար իրավասու սուբյեկտների առաջարկով՝ մինչև ծրագրված մատակարարման տարվան նախորդող տարվա նոյեմբերի 1-ը:

1.3. Ռուսաստանի Դաշնության տարածքում

1.3.1. Ռուսաստանի ՄԷՀ-ի շրջանակներում Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների առումով ամփոփիչ կանխատեսվող հաշվեկշիռ ծևավորելու Կարգի համաձայն, իրավասու կազմակերպությունը (Ռուսաստանի Դաշնության ազգային (համառուսական) միասնական էլեկտրական ցանցի կառավարման հարցերով կազմակերպություն (այսուհետ՝ ԱՄԷՅ) մինչև ծրագրված մատակարարման տարվան նախորդող տարվա ապրիլի 1-ը, ազգային էլեկտրացանցի կառավարում իրականացնող անդամ պետությունների իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցված առաջարկություն են ներկայացնում Ռուսաստանի Դաշնության սակագների հարցերով դաշնային ծառայություն (ՍԴԾ) և ՄԷՀ համակարգային օպերատորին:

1.3.2. Ռուսաստանի ՍԴԾ-ի կողմից քննարկվում են համաձայնեցված առաջարկությունները և դրանք հաշվի են առնվում հաջորդ օրացուցային տարվա համար ըստ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների բաշխվածության էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման կանխատեսվող հաշվեկշիռը ծևակերպելիս՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում:

1.3.3. ՄՊՀ-ի համար նախատեսված էլեկտրաէներգիայի և հզորության ծավալները, որոնք հաստատվել են ըստ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների բաշխվածության էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության և սպառման կանխատեսվող ամփոփիչ հաշվեկշիռի ցուցանիշների կազմում մատակարարման տարվա համար, հաշվի են առնվում էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների կողմից մատուցվող ծառայությունների վճարները (սակագները հաշվարկելիս:

1.3.4. ՄՊՀ-ի համար նախատեսված էլեկտրաէներգիայի և հզորության ծավալները կարող են փոփոխվել ԱՄԷՅ կառավարման գծով կազմակերպության առաջարկով, անդամ պետությունների իրավասու կազմակերպությունների հետ պայմանավորվածության դեպքում, մինչ մատակարարման ծրագրված տարվան նախորդող նոյեմբերի 1-ը, որի ընթացքում պետք է համապատասխան փոփոխությունը կատարվի էլեկտրաէներգիայի ոլորտի բնական մենաշնորհների կողմից մատուցվող ծառայությունների համար սահմանված վճարներում(սակագներում):

**2. Էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդման
տեխնիկական հնարավորությունների և պլանավորված ծավալների սահմանման
կարգը էներգահամակարգերի աշխատանքի տարեկան, ամսական, օրական և
օրվա կտրվածքով ռեժիմների հիման վրա, ներառյալ այն դրույթները, որոնցով
սահմանվում են պլանավորման համակարգողի գործառույթներն ու
իրավասությունները**

2.1. Տերմինաբանությունը:

Սույն Մեթոդաբանության 2-րդ մասի նպատակներով՝ կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

Վերահսկվող հատվածը՝ անդամ պետությունների համակարգային օպերատորների դիսպետչերական կենտրոնների կողմից սահմանվող էլեկտրահաղորդման գծերի (ԷՀԳ) և էլեկտրական ցանցերի այլ տարրերի համալիր ամբողջություն, որոնցով հաղորդվող հզորությունների փոխհոսքը վերահսկվում է կայուն աշխատանքի, էներգահամակարգերի ապահովության և կենսունակության ապահովման նպատակով:

Հզորության առավելագույն թույլատրելի փոխհոսք՝ համակարգի հատվածը առավելագույն փոխհոսք, որը բավարարում է նորմալ ռեժիմների բոլոր պահանջները:

Միջաբետական հատվածը՝ անդամ պետությունների էներգահամակարգերի օպերատորների կողմից սահմանվող մատակարարման կետ կամ կետերի խումբ, որով անցնում են հարևան պետությունների էներգահամակարգերը (առանձին էներգաշրջանները) միավորող միջաբետական էլեկտրահաղորդման գծերը՝ տեխնիկական պայմանավորված էլեկտրաէներգետիկական ռեժիմների գուգահեռ աշխատանքների պլանավորման և կառավարման գործառույթներով:

Օգտագործվող մյուս հասկացություններն ունեն Արձանագրությամբ սահմանված էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության առումով նշանակությունները (Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի հավելված 21):

2.2. Ընդհանուր դրույթներ:

2.2.1. Պլանավորման փուլում որոշվող խնդիրները՝

– տարեկան պլանավորում, անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) պահանջվող ծավալներն իրացնելու և էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդման տեխնիկական հնարավորության ստուգում, որոնք հաշվի են առնվում էլեկտրաէներգիայի (հզորության)

արտադրության և կիրառման կանխատեսվող հաշվեկշիռներում՝ հաշվի առնելով նաև էլեկտրացանցերի սարքավորումների վերանորոգման տարեկան պլանային գրաֆիկները, որոնք սահմանափակում են էլեկտրաէներգիայի ներմուծման-արտահանման համար նախատեսված հատվածը և, անհրաժեշտության դեպքում՝ այդ սարքավորումներում մտցվող ուղղումները.

– ամսական պլանավորում. անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) պահանջվող ծավալներն իրացնելու տեխնիկական հնարավորության ստուգում, որը հաշվի է առնվում էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության և սպառման տարեկան կանխատեսվող հաշվեկշիռներում՝ հաշվի առնելով նաև էլեկտրացանցերի սարքավորումների վերանորոգման ամսական գրաֆիկները, որոնք սահմանափակում են էլեկտրաէներգիայի ներմուծման-արտահանման համար նախատեսված հատվածը և, անհրաժեշտության դեպքում՝ այդ սարքավորումներում մտցվող ուղղումները.

ռեժիմների օրական պլանավորում և ժամային (օրվա կտրվածքով) շտկում. անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) ծավալներն իրացնելու տեխնիկական հնարավորության ստուգում, որի մասին տեղեկացվում է մեկ օր առաջ՝ ըստ ժամերի՝ հաշվի առնելով իրական ռեժիմների սխեմատիկ իրավիճակը, էլեկտրացանցի սարքավորումների պլանային, ոչ պլանային և վթարային անջատումները, որոնք սահմանափակում են անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի ներմուծման-արտահանման համար նախատեսված հատվածը, մատակարարումների ծավալը և էլեկտրաէներգիայի միջանական հաղորդումը:

2.2.2. Պլանավորումը (անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջանական հաղորդման պլանավորված ծավալների իրագործման հաշվարկը) իրականացվում է Ռուսաստանի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի միջև և Ռուսաստանի ՄԷՀ-ի ու Բելառուսի Միացյալ Էներգետիկական համակարգի (Բելառուսի ՄԷՀ) միջև՝ զուգահեռ աշխատող էներգահամակարգերի հաշվարկային մոդելների օգտագործմամբ (այսուհետ՝ հաշվարկային մոդել):

2.2.3. Հաշվարկային մոդելը Ռուսաստանի ՄԷՀ-ի, Ղազախստանի ՄԷՀ-ի և Բելառուսի ՄԷՀ-ի տեխնոլոգիապես փոխկապակցված մասերի մաթեմատիկական մոդել է՝ պլանավորման համար անհրաժեշտ ծավալով և, որը ներառում է հետևյալի նկարագրությունը.

- էլեկտրացանցի փոխարինման սխեմաների պարամետրերի և սյունակների,
- ակտիվ և ռեակտիվ հանգուցային լարումների,
- հանգույցներում էլեկտրաէներգիայի ակտիվ և ռեակտիվ արտադրման,

– Էլեկտրաէներգիայի արտադրման ակտիվ և ռեակտիվ հզորության առավելագույն ու նվազագույն սահմանի.

– ցանցային սահմանափակումների:

2.2.4. Հաշվարկային մոդելը ծևավորվում է համակարգային օպերատորների միջև համաձայնեցված փոխարինման սխեմաների հիման վրա, որպես կանոն, բազային ռեժիմների համար, որոնք համապատասխանում են ծմեռային ռեժիմի առավելագույն և նվազագույն բեռնվածության ժամերին ու ամառային ռեժիմի առավելագույն և նվազագույն բեռնվածության ժամերին (բազային հաշվարկման սխեմաներ): Սխեմային և ռեժիմներին բնորոշ իրավիճակների համար պետք է նշել միջակատական վերահսկվող հատվածներում, ինչպես նաև ներքին վերահսկվող հատվածներում փոխհոսքի առավելագույն թույլատրելի սահմանը, եթե այդ հատվածները էական նշանակություն ունեն միջակատական մատակարարումների (փոխանակումներ) իրականացման համար:

2.2.5. Պլանավորման համակարգողն է Ռուսաստանի ՄԷՀ համակարգային օպերատորը:

2.2.6. Պլանավորման յուրաքանչյուր փուլում հաշվարկային մոդելների և թարմացվող տեղեկությունների կազմը, այդ թվում՝ հաշվարկային մոդելներում ներառված էներգաօբյեկտների և էներգահամակարգերի (համարժեք էներգահամակարգերի) ցանկը, դրանց կազմման և թարմացման կարգն ու ժամանակավոր կանոնները, էներգահամակարգերի տարեկան, ամսական, օրական և ժամային աշխատանքային ռեժիմների պլանավորման ծևաչափն ու տվյալների փոխանակման միջոցները սահմանվում են Ռուսաստանի ՄԷՀ համակարգային օպերատորի, ԱՄԷՑ կառավարման ընկերության և Բելառուսի համակարգային օպերատորի գործառույթները կատարող ընկերության ու Ղազախստանի ՄԷՀ համակարգային օպերատորի միջև հաստատված փաստաթղթերով:

2.3. Պլանավորման համակարգողի և այլ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկ համակարգերի համակարգային օպերատորների գործառույթներն ու իրավասությունները

2.3.1. Պլանավորման համակարգողն իրականացնում է՝

– բազային հաշվարկային մոդելների կազմավորում,

– պլանավորման նպատակով տեղեկատվության փոխանակման կազմակերպում Բելառուսի ՄԷՀ գործառույթները կատարող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ համակարգային օպերատորի հետ տեղեկատվության փոխանակման կազմակերպում՝ պլանավորման նպատակների համար.

- Էլեկտրաէներգետիկ ռեժիմների հաշվարկների անցկացում՝ Բելառուսի ՄԷՀ գործառույթները կատարող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ համակարգային օպերատորից ստացված տվյալների հիման վրա.

- անդամ պետությունների էներգահամակարգերի (էներգահամակարգերի հատվածների) միջև միջայետական փոխհոսքի շտկում, եթե հաշվարկի ժամանակ առաջ են եկել էլեկտրաէներգիայի ռեժիմների անդրագործելիություն կամ եթե միջայետական հաղորդումների և մատակարարման հայցվող ծավալները ներկայացնելու ժամանակ հաշվարկային մոդելների վերահսկվող հատվածքներում գերազանցվել է փոխհոսքի առավելագույն թույլատրելի սահմանը՝ առաջնահերթության այն սկզբունքներն ապահովելու նպատակով, որոնք սահմանված են էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքների մասին համաձայնագրի 4 -րդ կետի 2-րդ ենթակետում («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 21-րդ հավելված).

1) Կողմ հանդիսացող պետության ներքին կարիքների ապահովում, որոնց էներգահամակարգի միջոցով պլանավորվում է իրականացնել միջայետական հաղորդում,

2) Էլեկտրաէներգիայի (հզորության) միջայետական հաղորդման ապահովում անդամ պետության էներգահամակարգի մի մասից դեպի մյուս մասը՝ սահմանակից անդամ պետությունների էներգահամակարգի միջոցով,

3) Էլեկտրաէներգիայի (հզորության) միջայետական հաղորդման ապահովում անդամ պետության էներգահամակարգի միջոցով՝ մեկ անդամ պետության էլեկտրաէներգետիկ համակարգից մյուս անդամ պետության էլեկտրաէներգետիկ համակարգ:

4) Էլեկտրաէներգիայի (հզորության) միջայետական հաղորդման ապահովում անդամ պետության էներգահամակարգի միջոցով՝ նպատակ ունենալով կատարելու պարտավորությունները երրորդ պետությունների էլեկտրաէներգետիկայի ոլորտի սուբյեկտների նկատմամբ.

- Բելառուսի ՄԷՀ համակարգային օպերատորի գործառույթները կատարող կազմակերպությանը, Ղազախստանի ՄԷՀ համակարգող օպերատորին տեղեկացնել վերոնշյալ հաշվարկների արդյունքների մասին:

2.3.2. Եթե հաշվարկի ժամանակ առաջ են եկել էլեկտրաէներգիայի ռեժիմների անդրագործելիություն կամ եթե հաշվարկային մոդելների վերահսկվող հատվածքներում գերազանցվել է փոխհոսքի առավելագույն թույլատրելի սահմանը, ապա պլանավորման համակարգող Բելառուսի ՄԷՀ համակարգային օպերատորի

գործառույթները կատարող կազմակերպությանը, Ղազախստանի ՄԷՀ համակարգող օպերատորին և ԱՄԷՅ կառավարման կազմակերպությանն է ուղարկում այն մեծությունները, որոնք անհրաժեշտ են էներգահամակարգի սալդո-փոխի հոսքերի ուղղման (հաշվեկշռման) համար:

Բելառուսի ՄԷՀ համակարգային օպերատորի գործառույթները կատարող կազմակերպությունը, Ղազախստանի ՄԷՀ համակարգող օպերատորը և ԱՄԷՅ կառավարման կազմակերպությունը շտկում են Էլեկտրաէներգիայի (հզորության) մատակարարման ծավալներն ըստ բոլոր պայմանագրերի, այդ թվում՝ Էլեկտրաէներգիայի (հզորության) միջավետական հաղորդման մասին պայմանագրերում, իիմք ընդունելով վերոնշյալ առաջնահերթությունը, կամ ձեռնարկում են այլ միջոցներ, որոնց միջոցով վերահսկվող հատվածներում կվերացվեն հաշվարկների արդյունքում պլանավորման համակարգողի կողմից հայտնաբերված թույլատրելի փոխի հոսքերի խախտումները:

Էլեկտրաէներգիայի (հզորության) մատակարարումների շտկված ծավալների մասին տեղեկությունները, ըստ բոլոր պայմանագրերի, այդ թվում անդամ պետությունների միջև Էլեկտրաէներգիայի (հզորության) միջավետական հաղորդման մասին պայմանագրերի, հաղորդվում է Բելառուսի ՄԷՀ համակարգային օպերատորի գործառույթները կատարող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ համակարգող օպերատորի և ԱՄԷՅ կառավարման կազմակերպության կողմից անդամ պետությունների Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի սուբյեկտներին, որոնք կնքված պայմանագրերի կողմերն են:

2.3.3. Պլանավորման համակարգողն իրավունք ունի Բելառուսի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթներ կատարող կազմակերպությունից, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի կողմից պլանավորման համար արդիական տվյալներ չստանալու դեպքում կամ տեխնիկական սխալներով կամ ակնհայտորեն ոչ հավաստի տվյալներ ստանալու դեպքում, օգտագործել փոխարինող տեղեկություններ, որոնց բովանդակությունն ու կիրառման կարգը սահմանվում է փաստաթղթերով, որոնք հաստատվում են այն կազմակերպության կողմից, որը կատարում է Բելառուսի ՄԷՀ-ի, Ռուսաստանի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները:

2.4. Տարեկան պլանավորում:

2.4.1. Տարեկան պլանավորումը կատարվում է Բելառուսի ՄԷՀ-ի, Ռուսաստանի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպության կողմից սահմանվող ժամկետում և կարգով:

2.4.2. Բելառուսի ՄԷՀ-ի, Ռուսաստանի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպությունը կազմում են Էլեկտրացանցերի սարքավորումների վերանորոգման ժամկետացանցի

գծագրեր՝ պլանավորվող օրացուցային տարվա համար և դրանք ներկայացնում են պլանավորման համակարգողին: Պլանավորման համակարգողը համաձայնեցնում է Էլեկտրացանցերի սարքավորումների վերանորոգման ժամկետացանկը՝ պլանավորվող օրացուցային տարվա համար և դրանք ուղարկում է Բելառուսի ՄԷՀ-ի, Ռուսաստանի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպություն և ԱՄԷՑ-ի կառավարման կազմակերպություն: Էլեկտրացանցերի այն օբյեկտների ցանկը, որոնց մասին համաձայնություն պետք է ձեռք բերվի վերանորոգումների տարեկան (ինչպես նաև ամսական) գրաֆիկի շրջանակներում և դրանց կազմման ժամային կանոնակարգը հաստատվում է Բելառուսի ՄԷՀ-ի, Ռուսաստանի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպության հետ:

2.4.3. Բելառուսի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպություննը պլանավորման համակարգողին տեղեկություններ է փոխանցում ազգային համապատասխան էներգահամակարգի տարեկան պլանավորման նպատակով (սպառում, արտադրում, սալդո փոխհոսքեր, ցանցային սարքավորումների վերանորոգում), որոնք նրանց կողմից նախապատրաստվում են Էլեկտրաէներգիայի կանխատեսվող հաշվեկշիռների, բնականոն աշխատանքային օրվա ամենալարված ժամի հզորության հաշվարկով:

2.4.4. Պլանավորման արդյունքում ձևավորվում են Ռուսաստանի ՄԷՀ-Ղազախստանի ՄԷՀ և Ռուսաստանի ՄԷՀ-Բելառուսի ՄԷՀ սալդո փոխհոսքերի ճշգրտված կանխատեսվող արժեքները:

2.4.5. Պլանավորման համակարգողն իրականացնում է ոեժիմների հաշվարկում և դրանց արդյունքներն ուղարկում է Բելառուսի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպությանը:

2.5. Ամսական պլանավորում:

2.5.1. Ամսական պլանավորումն իրականացվում է Բելառուսի ՄԷՀ-ի, Ռուսաստանի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպության կողմից սահմանված ժամկետներում և կարգով, նույն սխեմայով, որը կիրառվում է տարեկան պլանավորման ժամանակ՝ իրականացնելով տվյալների և արդյունքների փոխանակում ամսական կտրվածքով:

2.6. Օրական և օրվա կտրվածքով պլանավորում:

2.6.1. Օրական և օրվա կտրվածքով պլանավորումն իրականացվում է Բելառուսի ՄԷՀ-ի, Ռուսաստանի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպության կողմից սահմանված ժամկետում և կարգով:

2.6.2. Բելառուսի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպությունները յուրաքանչյուր օր պլանավորման համակարգողին ներկայացնում են տվյալներ պլանավորման օրերի (այսուհետ՝ X օրեր) հաշվարկային մոդելի թարմացման համար՝ (00:00-ից մինչև 24:00) 24 ժամվա ընթացքում վերլուծված հավաքական տվյալների միջոցով, որոնք ներառում են հետևյալը.

– 220 կՎ և ավելի բարձր հզորության էլեկտրաէներգետիկ համակարգերի էլեկտրացանցային սարքավորումների տարրերի պլանավորված վերանորոգում,

– Էներգահամակարգում (այդ թվում՝ Բելառուսի ՄԷՀ-ի, Ռուսաստանի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպության կողմից հաստատված առանձին էներգաշրջաններում՝ հաշվարկային մոդելի կազմը ծևավորելու ժամանակ) էլեկտրաէներգիայի սպառման և արտադրման գրաֆիկները՝ ըստ ժամերի,

– սալդո փոխհոսքերի ժամային գրաֆիկներ (էներգահամակարգերի դրական սալդո փոխհոսքերի դեպքում ընդունվում է դրա դեֆիցիտը):

ԱՄԷՅ կառավարման կազմակերպությունը պլանավորման համակարգողին ներկայացնում է Ռուսաստանի ՄԷՀ-ի, Ղազախստանի ՄԷՀ-ի և Բելառուսի ՄԷՀ-ի միջև էլեկտրաէներգիայի մատակարարումների ծավալների ժամային գրաֆիկների՝ Բելառուսի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպության հետ համաձայնեցված հանրագումար արժեքները բոլոր տեսակների պայմանագրերի համար, այդ թվում՝ անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջառետական հաղորդման առումով:

2.6.3. Եթե Բելառուսի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպության կողմից պլանավորման համակարգողին չի տրամադրվում հաշվարկային մոդելների թարմացման նպատակով տվյալներ, ապա վերջինս օգտագործում է փոխարինող տեղեկություններ, որոնք հաստատված են Բելառուսի ՄԷՀ-ի, Ռուսաստանի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպության կողմից՝ իրենց միջև համաձայնեցված հաշվարկային մոդելների կազմը ծևավորելու ժամանակ:

2.6.4. Պլանավորման համակարգողը թարմացնում է հաշվարկային մոդելները և իրականացնում էլեկտրական ռեժիմների հաշվարկ:

2.6.5. Պլանավորման համակարգողն իրականացնում է ռեժիմների հաշվարկում և համաձայնեցված ծևաչափով փոխանցում է Բելառուսի ՄԷՀ-ի,

Ռուսաստանի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպությանը հաշվարկների արդյունքները:

2.6.6. Եթե անդամ պետությունների միջև մատակարարումների և միջային հայտական հաղորդման ծավալների հայտարարված արժեքներն իրատեսական չեն, ապա Բելառուսի ՄԷՀ-ի, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպությունը և ԱՄԷՀ-ի կառավարման կազմակերպությունը միջոցներ են ձեռնարկում մատակարարումների և միջային հայտական հաղորդման ծավալների ճշգրտման համար՝ հաշվի առնելով սույն Մեթոդաբանության 2.3.1 կետում սահմանված առաջնահերթությունները:

2.6.7. Եթե էլեկտրասպառման և (կամ) սխեմային ու ռեժիմային պայմանների անկանխատեսելի փոփոխությունների արդյունքում և (կամ) մատակարարումների պայմանագրերի պայմանների փոփոխությունների հետևանքով անդամ պետությունների միջև մատակարարումների և էլեկտրաէներգիայի (հզորության) հաղորդման ծավալներում պահանջվում է ուղղում կատարել օպերատիվ օրերի ընթացքում, ապա Բելառուսի ՄԷՀ-ի և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպությունները պլանավորման համակարգողին ներկայացնում են՝

– տվյալներ ընթացիկ օրերի հաշվարկային մոդելների թարմացման համար՝ X օրերի մնացած ժամերի թարմացված համալիր տվյալների ձևով՝ ժամային կտրվածքով այնպիսի ծավալով, որը համապատասխանում է մեկ օր առաջ պլանավորման նպատակով փոխանցված տվյալներին»

– անդամ պետությունների միջև մատակարարումների և էլեկտրաէներգիայի (հզորության) հաղորդման ծավալներում առաջարկվող փոփոխության ծավալի մասին հայտ:

2.6.8. Օրվա ընթացքում ժամային յուրաքանչյուր փուլի համար սահմանվում է վերջնաժամկետային տվյալներ («Դարպասները փակելու ժամանակ») և հաշվարկների արդյունքները փոխանցելու համար: «Դարպասները փակելու ժամանակ»-ից հետո տվյալների փոխանցումն արգելվում է: Պլանավորման համակարգողը թարմացնում է հաշվարկային մոդելները և կատարում է X օրվա մնացած ժամերի համար էլեկտրական ռեժիմների հաշվարկ:

2.6.9. Պլանավորման արդյունքում կազմվում է անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջային հայտական հաղորդման և մատակարարումների ծավալի պլանային ճշգրտված գրաֆիկը ըստ ժամերի՝ X օրերի մնացած ժամերի համար: Եթե անհնար է իրականացնել պլանային ճշգրտված գրաֆիկը սխեմային և ռեժիմային պայմաններում կատարված փոփոխությունների պատճառով այն բանից հետո, եթե ռեժիմների օրվա կտրվածքով փոփոխություն է կատարվել, ապա մատակարարումների և անդամ պետությունների միջև

Էլեկտրաէներգիայի միջպետական հաղորդման ծավալների փոփոխություն թույլատրվում է վթարային օգնության տրամադրման կամ Էլեկտրաէներգիայի հարկադիր կատարվող մատակարարումների պայմաններով՝ անդամ պետությունների իրավասու տնտեսավարող սուբյեկտների միջև Էլեկտրաէներգիայի մատակարարման մասին հատուկ պայմանագրերի համաձայն:

3. Անդամ պետությունների սուբյեկտների ցանկը, որոնք իրավասու են կազմակերպելու և իրականացնելու ՄՊՓ նշելով այն գործառույթները, որոնք կատարվում են յուրաքանչյուր կազմակերպության կողմից, ՄՊՓ ապահովման շրջանակներում

3.1. Բելառուսի Հանրապետության տարածքում:

3.1.1. Բելառուսի Հանրապետության տարածքում ՄՊՓ կազմակերպումն ու իրականացումը վերապահվում է այն կազմակերպությանը, որն իրականացնում է Բելառուսի ՄԷՀ-ի կառավարում, և Բելառուսի ՄԷՀ-ի համակարգող օպերատորի գործառույթները կատարող կազմակերպությանը, որոնք իրականացնում են հետևյալ գործառույթները՝

– Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայությունների մատուցում՝ Էլեկտրացանցով (կազմակերպություններ, ստորադաս կազմակերպություններ, որոնք կատարում են Բելառուսի ՄԷՀ-ի կառավարման գործառույթներ, Բելառուսի ՄԷՀ-ի ընդհանուր համակարգմամբ).

– Էլեկտրաէներգիայի (հզորության) միջավետական հաղորդման տեխնիկական դիսպեչերական աշխատանքների գծով ծառայությունների մատուցում (Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթները կատարող կազմակերպություն).

– հարևան պետությունների էներգահամակարգերի հետ համագործակցություն գուգահեռ աշխատանքների կառավարման և կայունության ապահովման գծով (Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթները կատարող կազմակերպություն):

3.2. Ղազախստանի Հանրապետության տարածքում

3.2.1. Ղազախստանի Հանրապետության տարածքում Էլեկտրաէներգիայի միջավետական հաղորդման կազմակերպումը և իրականացումը վերապահվում է համակարգի օպերատորին, որն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

– ազգային Էլեկտրական ցանցով Էլեկտրաէներգիայի հաղորդման մասով ծառայությունների մատուցում,

– Էլեկտրաէներգիայի սպառման և ցանց բաց թողնելու տեխնիկական դիսպեչերական աշխատանքների գծով ծառայությունների մատուցում,

– Էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման միջև հավասարակշռության ապահովման ծառայություններ,

– սահմանակից պետությունների էներգահամակարգերի հետ համագործակցություն զուգահեռ աշխատանքների ռեժիմների կառավարման և կայունության ապահովման գծով:

3.3. Ռուսաստանի Դաշնության տարածքում:

3.3.1. Անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) հաղորդման ապահովումը Ռուսաստանի Դաշնության էներգահամակարգի միջով Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, ենթադրում է համայիր միջոցառումների իրականացում, որոնք կապված են հետևյալի հետ՝

3.3.1.1. Էլեկտրաէներգետիկայի ոլորտում օպերատիվ-դիսպետչերական կառավարման գծով ծառայությունների մատուցում, այդ թվում՝ Ռուսաստանի էներգահամակարգի և այլ անդամ պետությունների էներգահամակարգերի զուգահեռ աշխատանքների ռեժիմների կառավարման, էլեկտրաէներգիայի (հզորության) փոխարինումն ապահովելու և կոռորդինացված պլանավորումն համակարգելու առումով,

3.3.1.2. Միասնական ազգային (համառուսական) էլեկտրացանցով էլեկտրաէներգիայի հաղորդման (փոխարիման) նպատակով ծառայությունների մատուցում, այդ թվում՝ անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջանական հաղորդման ապահովում,

3.3.1.3. Ռուսաստանի Դաշնության էլեկտրաէներգիայի մեծածախ շուկայում էլեկտրաէներգիայի և հզորության շրջանառության հատկորշիչներ, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում էլեկտրաէներգիայի (հզորության) հավասար ծավալների փոխկապակցված և միաժամանակյա մատակարարման ապահովում դեպի Ռուսաստանի էներգահամակարգ և այդ համակարգից դուրս՝ անդամ պետությունների հետ Ռուսաստանի Դաշնության սահմանին (սահմաններին) տեղակայված տարբեր մատակարարման կետերի միջոցով:

3.3.2. Անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջանական հաղորդումն ապահովում է հետևյալ իրավասու կազմակերպությունների կողմից՝

3.3.2.1. Ռուսաստանի ՄԷՀ համակարգային օպերատորը՝ Ռուսաստանի ՄԷՀ-ի, Ղազախստանի ՄԷՀ-ի և Բելառուսի ՄԷՀ-ի հետ զուգահեռ աշխատանքի ռեժիմների կազմակերպման և կառավարման մասով,

3.3.2.2. ԱՄԷՑ կառավարման կազմակերպությունը՝ անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջանական հաղորդման ժամանակ էլեկտրաէներգիայի փոխարիման հետ կապված ծառայություններ (փոխարինման սկզբունքի օգտագործմամբ) Ռուսաստանի ՄԷՀ-ով և Ռուսաստանի ՄԷՀ-ի զուգահեռ աշխատանքի կազմակերպում Ղազախստանի ՄԷՀ-ի և Բելառուսի ՄԷՀ-ի

հետ, այդ թվում՝ միջանական հաղորդման (տարեկան, ամսական, ժամային) պլանավորման գծով արտասահմանյան իրավասու կազմակերպությունների հետ փոխգործակցություն, Էլեկտրաէներգիայի փաստացի ծավալների բաշխում Ռուսաստանի Դաշնության պետական և ՄԷՀ անդամ պետությունների սահմանով ըստ ժամերի՝ հաշվի առնելով ճշգրտված պլանային ծավալներն ըստ առևտրային պայմանագրերի. Ռուսաստանի Դաշնության պետական և ՄԷՀ անդամ պետությունների սահմանով փոխադրման փաստացի ժամային ծավալների շեղումների հայտնաբերում պլանավորվածից. Էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման իրականացում անդամ պետությունների ընդհանուր սահմաններում տեղակայված մատակարարման կետերում,

3.3.2.3. Առևտրական օպերատոր՝ կազմակերպություն, որն իրականացնում է գործառույթներ Էլեկտրաէներգիայի, հզորության և մեծածախ շուկայում շրջանառության համար թույլատրելի այլ ապրանքների ու ծառայությունների մեծածախ առևտրի կազմակերպման ծառայությունների առումով.

3.3.2.4. Կազմակերպություն, որն իրականացնում է գործառույթներ՝ կապված մեծածախ շուկայի մասնակիցներին ներկայացվող պահանջների և նրանց պարտականությունների հաշվարկման ծառայությունների մատուցման հետ,

3.3.2.5. Առևտրային գործակալ՝ Էլեկտրաէներգիայի և հզորության մեծածախ շուկայի մասնակից, որն իրականացնում է արտահանման–ներմուծման գործողություններ անդամ պետությունների միջև Էլեկտրաէներգիայի (հզորության) միջանական հաղորդումն ապահովելու նպատակով պահանջվող Էլեկտրաէներգիայի (հզորության) ծավալների ապահովման հասանելիության կազմակերպման առումով՝ կապված Էլեկտրաէներգիայի և հզորության մեծածախ շուկայում հարաբերությունների և պլանային սալիդ փոխհոսքերից փաստացի սալիդ փոխհոսքերի շեղման հետ կապված հարաբերությունների կարգավորման հետ:

4. Էլեկտրաէներգիայի (հզորության) միջանական հաղորդում իրականացնելիս բնական մենաշնորհների սուբյեկտների սակագներում ներառված ծախսերի սահմանումը:

4.1. Բելառուսի Հանրապետության տարածքում:

4.1.1. Բելառուսի Հանրապետություն հաղորդման ցանցով (ՀՅ) Էլեկտրաէներգիայի միջանական հաղորդման համար մատուցված ծառայությունների ծախսերը, որոնք ներառված են բնական մենաշնորհների սուբյեկտների սակագներում, անդամ պետությունների միջև Էլեկտրաէներգիայի (հզորության) միջանական հաղորդում իրականացնելիս, հաշվարկվում են հետևյալ բանաձևով,

$$Z_{\text{сет}} = Z (1 + \text{ИФ}) (1 + \text{ПР}) (1 + \text{Н}), \text{որտեղ՝}$$

3' ՀՅ-ն պահելու և շահագործելու ընդհանուր ծախսերն են, որոնք վերաբերում են անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջառական հաղորդմանը՝ սահմանված իրավասու պետական մարմինների կողմից հաստատված կարգով.

ИФ' Նորարարական ֆոնդում հաշվառված մասնաբաժինն է,

ПР' Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որպես շահույթ հաշվառված մասնաբաժինն է,

Н' որպես հարկ հաշվառված մասնաբաժինն է,

Ընդհանուր ծախսեր 3-ն ներառում է՝

շահագործման և վերանորոգման ծախսերը, աշխատավարձը, ամորտիզացիան, այլ դրամական ծախսեր (օժանդակ նյութեր, կողմնակի էներգիա, սոցիալական ապահովագրության համար հաշվառված գումարներ և այլն), էլեկտրաէներգիայի կորստի փոխհատուցման ծախսեր:

4.1.2. Բելառուսի ՄԷՀ-ի ցանցերով Էլեկտրաէներգիայի միջառական հաղորդման մասով ծառայությունների մատուցման սակագինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով,

$$T = \frac{3_{\text{сек}}}{\mathcal{E}_t}, \text{որտեղ՝}$$

Տ Էլեկտրաէներգիայի միջառական հաղորդման համար ծառայությունների մատուցման սակագինն է Բելառուսի ՄԷՀ-ի ցանցերով,

Э_t' Բելառուսի ՄԷՀ-ի ցանցերով անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի միջառական հաղորդման համախառն ծավալն է:

4.2. Ղազախստանի Հանրապետության տարածքում

4.2.1. Ղազախստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ էլեկտրաէներգիայի հաղորդման համար ծառայությունների սակագինը, այդ թվում անդամ պետությունների միջև միջառական հաղորդման համար ծառայությունների սակագինը, որը կիրառելի է (այսուհետ՝ ԱԷՅ) էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայություն իրականացնող սպառողների համար, այդ թվում՝ ազգային էլեկտրացանցերով, հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$T = \frac{Z + P}{W_{\text{сум}}} \quad (\text{տենգե/կՎատ/ժամ}), \text{որտեղ՝}$$

Դ' Էլեկտրաէներգիայի հաղորդման համար ծառայությունների սակագինն է, այդ թվում անդամ պետությունների միջև միջապետական հաղորդման համար ծառայությունների սակագինը, որը կիրառելի է Էլեկտրաէներգիայի, այդ թվում՝ միջապետական, ԱԷՑ-ով (տենգե/կՎատ/ժամ) հաղորդման ծառայություն իրականացնող սպառողների համար,

Հ' Էլեկտրաէներգիայի, այդ թվում՝ միջապետական հաղորդման ծառայությունների համար, օրենսդրությամբ սահմանված կարգով (միլիոն տենգե) Ղազախստանի Հանրապետության ԱԷՑ ընդհանուր ծախսերն են,

Բ' շահույթի չափն է, որն անհրաժեշտ է ԱԷՑ-ի արդյունավետ գործունեության համար, Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայությունների մատուցման դեպքում, այդ թվում՝ Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով միջապետական հաղորդման ծառայություններ մատուցելիս՝ (միլիոն տենգե),

W_{ցմ}՝ Էլեկտրաէներգիայի հաղորդման համախառն ծավալն է, որն ամրագրված է պայմանագրերով (միլիոն կՎատ/ժամ):

4.2.2. Ղազախստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ազգային Էլեկտրացանցով Էլեկտրաէներգիայի հաղորդման համար ծառայությունների մատուցման սակագինը հաշվարկելիս, որպես սակագնային Եկամուտ, ներառվում են ազգային Էլեկտրացանցով Էլեկտրաէներգիայի հաղորդման համար ծառայությունների մատուցման ընդհանուր ծախսերը և շահույթի չափը, որն անհրաժեշտ է Էլեկտրաէներգիայի հաղորդման համար ծառայություններ մատուցելիս արդյունավետ գործունեություն ծավալելու համար (Ենելով ակտիվների արդյունավետությունից):

Էլեկտրաէներգիայի հաղորդման համար ծառայությունների սակագներում ներառվող ծախսերը սահմանվում են Ղազախստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

4.3. Ռուսաստանի Դաշնության տարածքում:

4.3.1. Ընդհանուր դրույթներ:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն՝ ԱՄԷՑ-ով Էլեկտրաէներգիայի հաղորդման համար ծառայությունների մատուցման սակագները հաստատվում են երկու տեսակի դրույքաչափերով՝ Էլեկտրացանցերի պահպանման դրույքաչափեր և ԱՄԷՑ-ում Էլեկտրաէներգիայի կորստի փոխհատուցման դրույքաչափեր:

Նմանապես, Ռուսաստանի Դաշնության էներգահամակարգի միջոցով անդամ պետությունների միջև Էլեկտրաէներգիայի (հզորության) միջապետական հաղորդման համար ծառայությունների սակագնում ներառված ծախսերի տարրերը

դասակարգվում են ըստ անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջավետական հաղորդման համար ծառայությունների սակագնի ծախսերի՝ ԱՄԷՅ-ի օբյեկտները պահպանելու համար և անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջավետական հաղորդման համար ծառայությունների սակագնում ներառված ծախսերի՝ ԱՄԷՅ-ում էլեկտրաէներգիայի և հզորության կորստի փոխհատուցման համար:

4.3.2. Անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջավետական հաղորդում իրականացնելիս բնական մենաշնորհների սուբյեկտների սակագներում ներառված ծախսերի սահմանումը:

4.3.2.1. Անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջավետական հաղորդման համար ծառայությունների սակագնի ծախսերի տարրերի ցանկը՝ ԱՄԷՅ-ի օբյեկտները պահպանելու համար:

ԱՄԷՅ-ի օբյեկտները պահպանելու համար դրույքաչափերում վճարվում է անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջավետական հաղորդման համար պահանջվող հզորությունը, որը որոշվում է այն պետության էներգահամակարգից էլեկտրաէներգիայի փոխհոսքի «ելքի կետում», որի էլեկտրացանցով իրականացվում է անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջավետական հաղորդումը:

ԱՄԷՅ-ի օբյեկտները պահպանելու համար դրույքաչափերը հաշվարկելիս հաշվի են առնվում ազգային կարգավորող մարմինների կողմից համապատասխան հաշվարկային ժամանակաշրջանի համար հաստատված հետևյալ տնտեսապես հիմնավորված ծախսերը՝

- գործառնական ծախսեր,
- անկանխատեսելի ծախսեր,
- ներդրումային կապիտալի վերադարձ (ամորտիզացիոն հաշվառումներ) ներդրումներին,
- ներդրված կապիտալից շահույթ:

4.3.2.2. Անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջավետական հաղորդման համար ծառայությունների սակագնի ծախսերի տարրերի ցանկը՝ ԱՄԷՅ-ում էլեկտրաէներգիայի և հզորության կորստի փոխհատուցման համար:

ԱՄԷՅ-ում էլեկտրաէներգիայի և հզորության կորստի փոխհատուցման համար ծախսերը սահմանվում են՝ ենթավ ԱՄԷՅ-ում էլեկտրաէներգիայի նորմատիվ կորուստներից՝ նվազեցված էլեկտրաէներգիայի կորստի ծավալի չափով, որը հաշվի է առնվել էլեկտրաէներգիայի համահավասար գներում և էլեկտրաէներգիայի ու

հզորության՝ յուրաքանչյուր հաշվարկային ժամանակաշրջանում մեծածախ շուկայում ձևավորված առքի գնի մեջ մատակարարման կետերի խմբի (ՄՏԽ) համար, և որը համապատասխանում է այն պետության էներգահամակարգի էլեկտրաէներգիայի փոխհոսքի «ելքի կետին», որի էլեկտրացանցերով իրականացվում է անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջապետական հաղորդում՝ հաշվի առնելով համապատասխան ազգային շուկայում ենթակառուցվածքային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների արժեքը:

5. Բնական մենաշնորհների սուբյեկտների սակագներում չներառված էլեկտրաէներգիայի (հզորության) միջապետական հաղորդում իրականացնելու հետ կապված տարրերի ցուցակը

5.1. Բելառուսի Հանրապետության տարածքում:

Բելառուսի Հանրապետությունում համակարգային ծախսերը ներառում են իրավասու պետական մարմինների կողմից հաստատված արտադրական հզորության պահուստի պահպանման ծախսերը՝ անդամ պետությունների միջև միջապետական հաղորդման ապահովման համար, սահմանված՝ հաշվի առնելով ընդհանուր հզորության մեծության մեջ Բելառուսի ՄԷՀ-ի ցանցերով հաղորդվող ՄՊՀ հզորության մասնաբաժինը, ինչպես նաև անդամ պետությունների միջև ՄՊՀ տեխնիկական կարգավորման (դիսպետչերացման) ծառայությունների ծախսերը:

5.2. Ղազախստանի Հանրապետության տարածքում:

Անդամ պետությունների միջև միջապետական հաղորդման համար ծառայությունների սակագինը որոշելու դեպքում հաշվի չեն առնվում Ղազախստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան ծախսերը:

5.3. Ռուսաստանի Դաշնության տարածքում

Էլեկտրաէներգիայի (հզորության) փոխարինման նպատակով, անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության) միջապետական հաղորդման համար էլեկտրաէներգիայի ծավալները պետք է հաշվի առնվեն մեծածախ շուկայում գնային առաջարկներ ներկայացնելիս, մրցակցային պայմաններում մեկ օր առաջ ներկայացրած գնային հայտերի մեջ ընտրություն կատարելիս, ռուսական էներգահամակարգի սահմանի (սահմանների) տարրեր կետերում էլեկտրաէներգիայի (հզորության) հավասար ծավալների փոխկապակցված և միաժամանակյա մատակարարումների հետ կապված համակարգային ծախսերի մասնաբաժնում շուկայական գինը որոշելիս: Համակարգային ծախսերը կազմավորվում են հետևյալ տարրերից՝

5.3.1. Ռուսաստանի Դաշնության էներգահամակարգով անդամ պետությունների էլեկտրաէներգիայի (հզորության) միջապետական հաղորդում իրականացնելիս էլեկտրաէներգիայի ծանրաբեռնվածության կորուստների և

համակարգային սահմանափակումների հետ կապված (հանգուցային գների տարբերություն) արժեքի փոխհատուցման տարրեր,

$$S_m^1 = \sum_{h \in m} (\max [(\lambda_h^{BIX} - \lambda_h^{BX}); 0] \times V_h^{MGT}) , \text{որտեղ՝}$$

λ_h^{BIX} , գին, որը սահմանվել է գնային հայտերի մրցակցային ընտրության արդյունքներով՝ մեկ օր առաջ հ ժամին, ո ամսին, արտահանում-ներմուծում հատվածքով՝ Ռուսաստանի ՄԷՀ էլեկտրաէներգիայի «Ելքի» կետին համապատասխան՝ միջազնության հաղորդման շրջանակներում.

λ_h^{BX} , գին, որը սահմանվել է գնային հայտերի մրցակցային ընտրության արդյունքներով՝ մեկ օր առաջ հ ժամին, ո ամսին, արտահանում-ներմուծում հատվածքով՝ Ռուսաստանի ՄԷՀ էլեկտրաէներգիայի «մուտքի» կետին համապատասխան՝ միջազնության հաղորդման շրջանակներում.

V_h^{MGT} , Միջազնության հաղորդման ծավալները Ռուսաստանի միասնական էլեկտրական ցանցերով ո ամսի հ ժամին.

5.3.2. Տարրեր՝ կապված արտադրական հզորության անհրաժեշտ պահուստի առկայության հետ, էլեկտրաէներգիայի (հզորության) միջազնության հաղորդումն ապահովող՝ Ռուսաստանի ՄԷՀ-ի աշխատանքային ռեժիմներն իրականացնելու համար,

$$S_m^2 = \Pi_{K_m} \times (K_{\text{ոլան.3CPI}_i}^{\text{քեզ}} - 1) \times \Pi_{\text{КОМ_предв.}}^{\text{3CPI}_i}, \text{որտեղ՝}$$

Π_{K_m} , պիկային հզորությունն է, որը համապատասխանում է ո ամսվա կտրվածքով՝ էլեկտրաէներգիայի միջազնության հաղորդման հայտագրված առավելագույն ժամային ծավալի հզորությանը,

$K_{\text{ոլան.3CPI}_i}^{\text{քեզ}}$, 3CPI-ում պաշարելու պլանային գործակիցն է, որը հաշվի է առնվում համակարգային օպերատորի կողմից՝ համապատասխան տարվա հզորության մրցակցային ընտրության ժամանակ,

$\Pi_{\text{КОМ_предв.}}^{\text{3CPI}_i}$, 3CPI-ում համապատասխան տարվա համար սպառողների մրցակցային ընտրության նախնական գինն է (սահմանվում է համակարգային օպերատորի կողմից՝ էլեկտրաէներգիայի և հզորության մեծածախ շուկայի կանոնների համաձայն),

3CPI՝ ազատ փոխհոսքի գոտին է, որով միջազնության հաղորդում իրականացնելիս անցնում են Ռուսաստանի ՄԷՀ-ի «Ելքի» կետերը՝ համապատասխանող մատակարարման «Ելքի» կետերը:

Միջաբետական հաղորդման արժեքը սահմանելիս հաշվի են առնվում ազատ փոխհոսքի գոտիներում (ազատ փոխհոսքի գոտիների խմբերում) հզորության մրցակցային ընտրության արդյունքներով սահմանված միջաբետական հաղորդման «Ելքի» և «մուտքի» կետերին համապատասխանող՝ գնորդների համար սահմանված պլանային գների միջև տարբերությունը:

6. Անդամ պետությունների օրենսդրության համաձայն՝ Էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդումը պայմանագրային հիմունքներով ձևակերպելու պահանջները

6.1. Բելառուսի Հանրապետության տարածքում.

Բելառուսի Հանրապետության էներգահամակարգով անդամ պետությունների էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդումն իրականացվում է, եթե համաձայնեցվել են սույն մեթոդաբանության 1-ին բաժնի և 2-րդ բաժնի 2.4, 2.5, 2.6 կետերի համաձայն՝ միջաբետական հաղորդման համար առաջարկվող էլեկտրաէներգիայի և հզորության ծավալները, և եթե այն համապատասխանում է Բելառուսի Հանրապետության իրավասու կազմակերպությունների հետ էլեկտրաէներգիայի միջաբետական հաղորդման մասին պայմանագրերին:

Յուրաքանչյուր պայմանագրով էլեկտրաէներգիայի միջաբետական հաղորդման համար ծառայությունների արժեքը սահմանվում է հետևյալ բանաձևով՝

$$C_{\text{MPI}} = Z_{\text{cer}} + Z_{\text{const.}}$$

6.2. Ղազախստանի Հանրապետության տարածքում:

Ղազախստանի Հանրապետության տարածքում անդամ պետությունների էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդումն իրականացվում է Ղազախստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տիպային ձևաչափով կնքված՝ էլեկտրաէներգիայի հաղորդման համար ծառայությունների մատուցման պայմանագրերի հիման վրա: Էլեկտրաէներգիայի միջաբետական հաղորդման իրականացման պայմանագրերում կարող են հաշվի առնվել նման հաղորդում կատարելու առանձնահատկությունները:

6.3. Ռուսաստանի Դաշնության տարածքում:

Ռուսաստանի ՄԷՀՀ-ով անդամ պետությունների էլեկտրաէներգիայի միջաբետական հաղորդումն իրականացվում է հետևյալ պայմանագրերի առկայության դեպքում՝

6.3.1. Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության անունից կազմակերպությունների կողմից իրավասություն ունեցող առևտրային

գործակալի պայմանագրեր՝ նպատակ ունենալով ապահովելու բնական մենաշնորհների կողմից տրամադրվող ծառայությունների և ռուսական էներգահամակարգի սահմանին (սահմաններին) մատակարարման տարրեր կետերում միջազգային հաղորդում իրականացնելու համար էլեկտրաէներգիայի (հզորության) հավասար ծավալների՝ փոխկապակցված և միաժամանակյա մատակարարման հասանելիությունը:

Ռուսաստանի ՄԷՀ-ով անդամ պետությունների էլեկտրաէներգիայի միջազգային հաղորդման արժեքը ու ամսում նման պայմանագրերում սահմանվում է հետևյալ բանաձևի համաձայն՝

$$Q_m^{MTI} = Q_m^{\Phi CK_MTI} + Q_m^{CO_MTI} + Q_m^{KO_MTI}, \text{որտեղ՝}$$

$Q_m^{\Phi CK_MTI}$, ԱՄԷՑ կառավարման կազմակերպման ծախսերի արժեքը, որը վճարվում է ըստ Ռուսաստանի օրենսդրության.

$Q_m^{CO_MTI}$, համակարգային օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների արժեքը, որը վճարվում է ըստ Ռուսաստանի օրենսդրության.

$Q_m^{KO_MTI}$, էլեկտրաէներգիայի (հզորության) մեծածախ շուկայի հետ կապված ծառայությունների արժեքը, որը մատուցվում է Ռուսաստանի ՄԷՀ-ով էլեկտրաէներգիայի միջազգային հաղորդման ժամանակ, ու ամսում:

$$Q_m^{KO_MTI} = S_m^1 + S_m^2 + Q_m^{ATC_MTI} + Q_m^{\Pi\Phi P_MTI} + Q_m^{AГЕНТ_MTI}, \text{որտեղ՝}$$

$Q_m^{ATC_MTI}$, էլեկտրաէներգիայի, հզորության կամ այլ մեծածախ շուկայում շրջանառության համար թույլատրելի այլ ապրանքների և ծառայությունների առևտրային օպերատորի ծառայությունների արժեքը, ու ամսում.

$Q_m^{\Pi\Phi P_MTI}$, համալիր ծառայությունների արժեքն է պահանջների և պարտավորությունների կատարման առումով, որոնք ամրագրված են ու ամսում մեծածախ շուկայի առևտրային համակարգին միանալու մասին Պայմանագրում

$Q_m^{AГЕНТ_MTI}$, առևտրային գործակալի ծախսերն են, որոնք երկկողմանիորեն սահմանվում են առևտրային գործակալի կողմից կնքված պայմանագրերով

6.3.2. Անդամ պետությունների կազմակերպությունների միջև էլեկտրաէներգիայի համակարգերի՝ գուգահեռ աշխատանքի մասին պայմանագրերի (տեխնիկական պայմանագրեր), որոնք իրականացնում են էլեկտրաէներգիայի օպերատիվ-դիսպեչերական կառավարման և ազգային էլեկտրացանցերով էլեկտրաէներգիայի հաղորդման (փոխադրման) գծով գործառույթներ.

6.3.3. Էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի պայմանագրերի, որոնց նպատակն է փոխհատուցել միջազգային մատակարարման հատվածըներում փաստացի փոխհոսքերի շեղումը պլանայինից, որը կարող է առաջանալ անդամ պետությունների սահմաններով այդ պետությունների իրավասու տնտեսավարող սուբյեկտների միջև էլեկտրաէներգիայի փոխադրման ժամանակ:

**7. Անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների միջև
էլեկտրաէներգիայի միջազգային փոխհոսքերի փաստացի ժամային
ժավալների մասին առևտրային հաշվառման տվյալների փոխանակում
կազմակերպելու կարգը**

7.1. Սույն կարգով սահմանվում է երկկողմանի փոխգործակցության հիմնական ուղղությունները առևտրային հաշվառման ժամային տվյալների ստացման մասով, էլեկտրահաղորդման միջազգային գծերով (ԷՄԳ) էլեկտրաէներգիայի օպերատիվ ժամային փոխհոսքի սահմանման կարգը՝ Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև՝ հաշվի առնելով առևտրային հաշվառման ժամային տվյալների և համաձայնեցնող մեթոդաբանության օգտագործումը՝ նախքան առևտրային հաշվառման տվյալների վերջնահաշվարկի կատարումը մատակարարման սահմանված կետերում, միջազգային էլեկտրահաղորդման գծերով, առևտրային հաշվառման տվյալների փոխանակման և առևտրային հաշվառման տվյալների համաձայնեցման ընթացակարգերը սահմանող կարգ, որոնց արդյունքում ստացվել են մատակարարման կետերում էլեկտրաէներգիայի արժեքները: Օպերատիվ ժամային փոխհոսքեր նշանակում է առևտրային հաշվառման ժամային տվյալներ (ըստ կես ժամյա կամ մեկ ժամյա կտրվածքի), որոնք ստացվել են էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման ավտոմատացված համակարգերի (ԷՀԱՀ) փոխհոսքի հաշվառման բոլոր կետերի առնչությամբ՝ հաշվի առնելով առևտրային հաշվառման համալիր տեխնիկական հնարավորությունները:

ԷՄԳ-ով էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման ժամային տվյալների կազմման և փոխանակման պայմաններն ու կարգը սահմանվում են ԷՄԳ-ի հաշվառման կետերով էլեկտրաէներգիայի փոխհոսքերի ժամային մեծությունների մասին տվյալների փոխանակման վերաբերյալ երկկողմ Համաձայնագրերի համաձայն:

7.2. Տեղեկությունների օպերատիվ փոխանակումը:

Յուրաքանչյուր 24-ժամը մեկ (կամ անդամ պետությունների կողմից համաձայնեցված այլ ժամանակահատվածով) անդամ պետությունների համապատասխան տնտեսավարող սուբյեկտները կազմում են ԷՄԳ-ով էլեկտրաէներգիայի ժամային փոխհոսքերի մեծությունները, փոխանակում են

ստացված տվյալները, կատարում են համապատասխան հաշվարկներ, գնահատում են համապատասխան տվյալները:

ԷՄԳ-ով հաղորդվող էլեկտրաէներգիայի ժամային փոխհոսքերի արժեքներ պարունակող տեղեկությունների օպերատիվ փոխանակման համար կիրառվում են տվյալների հաղորդման համաձայնեցված ձևաչափեր:

7.3. Մատակարարման կետին առաքվող էլեկտրաէներգիայի ժամային արժեքների հաշվարկը:

Մատակարարման կետին առաքվող էլեկտրաէներգիայի ժամային արժեքների հաշվարկն իրականացվում է փոխանցված և ստացված էլեկտրաէներգիայի փաստացի ծավալների հաշվարկման մեթոդաբանությամբ, որի մասին համաձայնություն է ձեռք բերվում երկողմանի կերպով:

8. Անդամ պետությունների միջաբետական էլեկտրահաղորդիչ գծերով փաստացի սալդո փոխհոսքերի սահմանման կարգը

Սույն կարգը, որով սահմանվում է օրացուցային ամսվա ընթացքում էլեկտրաէներգիայի միջաբետական հատվածի միջոցով հաղորդվող փաստացի ծավալները, նախատեսված է անդամ պետությունների իրավասու կազմակերպությունների կողմից օգտագործվելու համար:

Անդամ պետությունների միջաբետական հատվածի միջոցով հաղորդվող էլեկտրաէներգիայի փաստացի սալդո-փոխհոսքերը, սահմանվում են, որպես ընդունված (WΠ1_գրահ) և (կամ) հաղորդված (WO1_գրահ) էլեկտրաէներգիայի քանակության հանրահաշվական գումար՝ յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար, մատակարարման յուրաքանչյուր կետում (WCալъдо_գրահ):

Օրացուցային ամսվա համար մաքսային սահմանով (մատակարարման կետով) անցնող էլեկտրաէներգիայի արժեքները, ԷՄԳ-ի աշխատանքում ներառված բոլոր ռեժիմներում՝ «Ընդունում», «Հաղորդում», և սալդո հաղորդումը հաշվարկվում են հետևյալ քանաձներով՝

$$W\Pi1_գրահ = \sum W(\text{факт}\Pi1)i,$$

$$WO2_գրահ = \sum W(\text{факт}O1)i,$$

$$WC\text{алъдо_գրահ} = W\Pi1_գրահ + WO1_գրահ, \text{որտեղ՝}$$

$W(\text{факт}\Pi1)i$ ՝ i- ԷՄԳ-ով օրացուցային ամսվա ընթացքում մատակարարման յուրաքանչյուր կետով ստացված էլեկտրաէներգիայի փաստացի քանակությունն է;

Սալդո փոխհոսքի հաշվարկման բանաձևի համար արժեքը վերցվում է փոխհոսքի ուղղության նշանով,

W(ֆակտ01)՝ i- ԷՄԳ-ով օրացուցային ամսվա ընթացքում մատակարարման յուրաքանչյուր կետով հաղորդված էլեկտրաէներգիայի փաստացի քանակությունն է: Սալդո փոխհոսքի հաշվարկման բանաձևի համար արժեքը վերցվում է փոխհոսքի ուղղության նշանով,

R` ԷՄԳ-ի քանակությունն է միջաբետական հատվածքում, որը ներառված է օրացուցային ամսվա ընթացքում կատարվող աշխատանքում:

9. Միության շրջանակում էլեկտրաէներգիայի միջաբետական հաղորդում իրականացնելիս միջաբետական հատվածքներում փաստացի փոխհոսքերի՝ պլանայինից շեղման արժեքի և ժավաների հաշվարկման կարգը

Միջաբետական հատվածքներում փաստացի մատակարարումները ներառում են հետևյալ տարրերը՝ էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդման ծավալները, անդամների տնտեսավարող սուբյեկտների կողմից կնքված առևտրային պայմանագրերում ներառված էլեկտրաէներգիայի ծավալները, Վթարային օգնության ծավալները և պլանայինից սալդո-փոխհոսքերի փաստացի արժեքների շեղումով պայմանավորված ծավալները:

Պլանայինից սալդո-փոխհոսքերի փաստացի արժեքների ժամային շեղման մեծության հաշվարկը և շեղումների ծավալի սահմանումը՝ պայմանավորված նրանով, թե ում կողմից է նախաձեռնությունը, իրականացվում է ԱՄԷՑ-ի կառավարման կազմակերպության՝ Ռուսաստանի ՄԷՀ-ը համակարգող օպերատորի, Բելառուսի ՄԷՀ-ը համակարգող օպերատորի գործառույթներն իրականացնող ընկերության, Ղազախստանի ՄԷՀ-ը համակարգող օպերատորի կողմից, հետևյալ սկզբունքների հիման վրա՝ Ռուսաստանի էներգահամակարգով էլեկտրաէներգիայի (հզորության) միջաբետական հաղորդում իրականացնելիս որպես էլեկտրաէներգիայի միջաբետական հաղորդման ժամային ծավալների մեծություն ընդունվում է պլանային արժեքների համապատասխան մեծությունը, որում հաշվի է առնվել դիսպետչերական գրաֆիկը:

– հաշվետու ժամանակահատվածի յուրաքանչյուր ժամի համար առևտրային պայմանագրերով էլեկտրաէներգիայի մատակարարման փաստացի ժամային ծավալներն ընդունվում են որպես պլանային արժեքներին համապատասխանող ծավալներ, որում հաշվի է առնվում ճշգրտումներ մտցնելու սահմանված կարգի համաձայն՝ դիսպետչերական օրական գրաֆիկը:

– ժամային շեղումների ծավալները, որոնք կարգավորվում են անդամ շհանդիսացող պետությունների էլեկտրաէներգետիկ համակարգերի համաձայն

(արտաքին հաշվեկշռում) հաշվի են առնվում Միության շրջանակներում՝ շեղումների ծավալներում: Արտաքին հաշվեկշռման ծավալների որոշման կարգը համաձայնեցվում է անդամ պետությունների սահմանակից էներգահամակարգերի համակարգային օպերատորների հետ (ՄԱՀԵ կառավարման գծով կազմակերպությունների մասնակցությամբ):

- Վթարային օգնության համար էլեկտրաէներգիայի ծավալները սահմանվում են վթարային օգնություն ցուցաբերելիս էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի պայմանագրերով, որոնք կնքվում են ազգային ներքին շուկաների սուբյեկտների միջև:

Ժամային շեղումների ծավալները ենթակա են անդամ պետությունների տնտեսավարող իրավասու սուբյեկտների միջև ֆինանսական կարգավորման՝ համաձայն այն պայմանագրերի, որոնք նախատեսված են սույն Մեթոդաբանության 6-րդ բաժնով՝ անդամ պետություններից յուրաքանչյուրի համար միջազգային հաղորդում ապահովելու նպատակով:

Ելնելով էլեկտրաէներգիայի գուգահեռ աշխատանքի մասին պայմանագրերի (տեխնիկական պայմանագրերի) պայմանները պահպանելու անհրաժեշտությունից, այդ թվում՝ անդամ պետությունների էներգահամակարգերի միջազգային փոխհոսքերի հաճախականությունը կարգավորելու մասով, շեղումների արժեքը պետք է փոխհատուցվի էլեկտրաէներգիայի (հզորության) ազգային ներքին շուկաների սուբյեկտներին հիմնավորված ծախսերի համար, որոնք նրանք կրում են էլեկտրաէներգիայի (հզորության) ազգային շուկայում հաշվեկշռված համակարգերի առնչությամբ մասնակցության արդյունքում:

Շեղումների արժեքի հաշվարկը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով էլեկտրաէներգիայի (հզորության) առքի/վաճառքի ծավալների հաշվառման հատուկ կարգը՝ նպատակ ունենալով ապահովելու էլեկտրաէներգետիկ համակարգերի գուգահեռ աշխատանքի տեխնիկական կողմն այնպիսի ծավալներով, որոնք չեն գերազանցում էլեկտրաէներգիայի համակարգերի գուգահեռ աշխատանքի մասին պայմանագրերում (տեխնիկական պայմանագրեր) կամ անդամ պետությունների էլեկտրաէներգիայի ոլորտում հարաբերությունների կարգավորմանը վերաբերող այլ պայմանագրերում սահմանված արժեքները:

Շեղումների համար փոխհատուցում կատարելու նպատակով գնված և վաճառված էլեկտրաէներգիայի ու հզորության հաշվարկի ժամանակ օգտագործվող քանակական և գնային հարաշավերը հաստատվում են Ռուսաստանի Դաշնության առևտրային կազմակերպությունների հաշվետու փաստաթղթերով:

Պայմանագրերի համաձայն մատակարարումների արժեքը հաշվարկելիս, չի թույլատրվում կատարել էլեկտրաէներգիայի (հզորության) ծավալների կրկնակի հաշվառում:
